

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

Հունիսի 4-ին, երեքշաբթի օրը, Ս. Գայանե վանքում, ձեռամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի, քահանայական կոչում և ձեռնադրություն ստացավ Նյու Յորքի Ս. Ներսես կրթօջախի շրջանավարտ Հակոբ սարկավագ Տինկիլյանը:

Հունիսի 3-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, տեղի ունեցավ «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիլակությամբ Տ. Աբել վրդ. Օղչուգյանի, որը վկայեց նորընծայի հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին: Ապա նորընծան ուխտեց «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա»:

Կոչման արարողության ավարտին նորընծան հրապարակավ արտասանեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը՝ ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի:

Մայիսի 4-ին, երեքշաբթի օրը, Ս. Գայանե բազմադարյան վանքում ս. պատարագ մատուցեց Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Ս. պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքը:

Նորընծան, Աբել վարդապետի առաջնորդությամբ, ծնրադիր բարձրացավ Ավագ խորան և, հավատացյալների խուռներամ բազմությանը դառնալով, բարձրացրեց իր ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարվելու:

Օծման խորհրդավոր պահն է: Ձեռնադրող սրբազանը սրբալույս մեռոնով օծում է նորընծայի ճակատը և աջ ձեռքը՝ վերանվանելով նրան Տ. Ստեփանոս քահանա:

Ապա նորընծան, դառնալով ժողովրդին, տալիս է իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Զեռնադրության արբազան արարողության վերջում Տ. Վաչե արբազանը բովանդակալից ու խրախուսական շնորհավորական քարոզով դիմում է նորաօծ քահանային՝ նրան ցանկանալով համբերություն, առավել նվիրում, կարողություն՝ փառավորելու իր արբազան կոչումը՝ ի պայծառություն մեր Ս. Եկեղեցու:

«Ողջույն»-ի պահին պատարագիչ արբազան հայրը ողջագուրվում է նորընծային: Նրան հետևում են բոլոր «քահանայք և սարկաւագք»:

Նորընծա քահանային մաղթում ենք՝ լինել «մշակ առանց ամօթոյ»: